



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 1-06/393- Ա

«24» օգոստոսի 2008թ.

**ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀՄԿԻՉ-ԳՐԱՍԱՐԿՎԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ  
ՏԵՂԱԴՐՍԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Առևտրի իրականացման վայրերում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղադրման աշխատանքների կազմակերպման և համակարգման նպատակով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

**1. Ստեղծել առևտրի իրականացման վայրերում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղադրումը համակարգող աշխատանքային խումբ՝ համաձայն Հավելված 1-ի:**

**2. Սահմանել, որ աշխատանքային խումբը ՀԳՄ-ների տեղադրման հարցերում անհրաժեշտ օժանդակություն է ցուցաբերում հարկային (տարածքային) տեսչություններից, սպառնալից միասնական հարկային վարչարարությունը:**

**3. Հարկային (տարածքային) տեսչությունների պետերին՝**

**3.1.** առևտրի իրականացման վայրերի կազմակերպիչների հետ իրականացնել աշխատանքներ՝ սուբյեկտների պետական գրանցման, հաշվառման, ՀԳՄ-ների գրանցման, վաճառատեղերի տրամադրման պայմանագրերի կնքման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հասույթների և առաքումների գրքերի գրանցման հարցերին լուծում տալու նպատակով.

**3.2.** ՀԳՄ-ների ներդրմանը զուգահեռ ձեռնարկել միջոցառումներ առևտրի իրականացման վայրերում խանութ, կրպակ և տաղավար չհանդիսացող պահեստային կամ համանման տարածքներից ապրանքների մատակարարման դեպքերում ՀԳՄ-ների կիրառումը բացառելու ուղղությամբ, ուժեղացնելով ՀՀ կառավարության 31.07.1997թ. N314 որոշմամբ սահմանված առաքումների գրանցման գրքերի վարման կարգի պահպանման և գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողությունը.

3.3. առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից առանց պայմանագրի կնքման վաճառատեղերը տրամադրելու, ինչպես նաև առևտրի իրականացման վայրում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, կենդանիների շուկաների և տոնավաճառների (վերնիսաժների) ֆիզիկական անձանց վաճառատեղերը տրամադրելու համար կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ.

3.4. Առաջիկայում համակարգչային ցանցի տեղադրման խնդիրների լուծման նպատակով շարունակել ՀՊԾ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն ներկայացնել վարչության կողմից սահմանված ձևով տեղեկատվությունը.

3.5. Աշխատանքային խմբին ներկայացնել առևտրի կազմակերպման վայրերում գործող, հաշվառված տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն համաձայն Հավելված 2-ի:

#### **4. Աշխատանքային խմբին՝**

4.1. ամենօրյա հսկողություն սահմանել սույն հրամանի 3-րդ կետում նշված միջոցառումների իրականացման նկատմամբ.

4.2. կազմակերպել խոշոր առևտրի իրականացման վայրերի և ՀԴՄ ներմուծողների համատեղ հանդիպումներ, օժանդակելով նրանց միջև համապատասխան պայմանագրերի կնքմանը.

4.3. ապահովել ՀԴՄ-ների կիրառման գործընթացի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության տրամադրումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահին:

#### **5. ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի տեղակալ՝ Ռ.Քոչարյանին**

5.1. ապահովել սույն հրամանի 3.4 կետով նախատեսված տեղեկատվության ամփոփումը և ամենօրյա տրամադրումը աշխատանքային խմբին.

5.2. ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ առևտրի իրականացման վայրերում շահագործվող ՀԴՄ-ների միջև ցանցային կապուղիների և ծրագրային ապահովման միջոցով միասնական համակարգի ներդրման ու շահագործման տեխնիկական հնարավորությունների ու ընթացակարգերի (մասնավորապես՝ յուրաքանչյուր վաճառատեղի համար տեղեկատվական միասնական համակարգին միանալու հնարավորություն, ծրագրային ապահովում, դրա ստեղծման, ներդրման ու սպասարկման հարցեր, համակարգի անխափան ու անվտանգ աշխատանք, ՀԴՄ-ների տվյալների ամփոփում և մշակում) վերաբերյալ.

5.3. առևտրի իրականացման վայրերում ներդրվող ՀԴՄ մոդելների ընտրության, ՀԴՄ-ների միջև տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման, դրա ծրագրային ապահովման և հարակից հարցերով քննարկումներին մասնակից դարձնել ոլորտի մասնագիտացված կազմակերպություններին.

5.4. ՀՀ ԿԱ ՀՊԾ պաշտոնական կայքում առանձնացնել հատուկ «թեժ» կոճակ, որտեղ պետք է տեղադրվեն առևտրի իրականացման վայրերում ՀԴՄ-ների ներդրման գործընթացին առնչվող տեղեկատվական նյութեր, իրազեկման թերթիկներ և անհրաժեշտ այլ նյութեր: ՀՀ ԿԱ ՀՊԾ

պաշտոնական կայքում առանձնացնել հատուկ հաճախակի հանդիպող հարցերի բաժին՝ գործընթացին առնչվող հարցերն և դրանց պատասխանները տեղադրելու համար:

**5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը դնել ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի տեղակալ Ա.Ալավերդյանի վրա:**

**6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 08.08.2008թ. «Առևտրի իրականացման վայրերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման հարցերի կանոնակարգման միջոցառումների մասին» N1-06/338-Ա հրամանը:**

Նախագահ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ԿԱԶՄ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

<b>Ա. Արզումանյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
<b>Վ. Բաղայանին</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության պետի տեղակալ
<b>Մ. Աղաջանյանին</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ օպերատիվ հետախուզական վարչության պետի տեղակալ
<b>Ա. Մանուկյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման և հարկման ընթացակարգերի վարչության հարկային հաշվառման և հսկողության ընթացակարգերի բաժնի պետ
<b>Բ. Նահապետյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀՊԾ հարկային տեսչությունների աշխատանքների համակարգման վարչության իրացման շրջանառության ծավալների վերլուծության և ոլորտային հսկողության բաժնի պետ
<b>Ա. Վարդանյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման և հարկման ընթացակարգերի վարչության անուղղակի հարկերի ընթացակարգերի բաժնի ավագ հարկային տեսուչ
<b>Վ. Մամվելյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության համակարգչային տեխնոլոգիաների մշակման և սպասարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչ
<b>Հ. Մարգարյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության համակարգչային տեխնոլոգիաների մշակման և սպասարկման բաժնի գլխավոր հարկային տեսուչ
<b>Ա. Նիկողոսյան</b>	ՀՀ ԿԱ ՀՊԾ իրավաբանական վարչության վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
<b>Ա. Մարտիկյան</b>	Էրեբունու ՀՏ պետի տեղակալ
<b>Գ. Մովսիսյան</b>	ՕՀՎ Էրեբունու բաժնի պետ
<b>Մ. Կարապետյան</b>	Խորհրդային ՀՏ պետի տեղակալ
<b>Ա. Գրիգորյան</b>	ՕՀՎ Խորհրդային բաժնի պետ
<b>Ե. Աբելյան</b>	Մյասնիկյանի ՀՏ պետի տեղակալ
<b>Ա. Օհանյան</b>	ՕՀՎ Մյասնիկյանի բաժնի պետ
<b>Վ. Սիսակյան</b>	Շահումյանի ՀՏ պետի տեղակալ
<b>Ն. Ջարգարյան</b>	ՕՀՎ Շահումյանի բաժնի պետ
<b>Տ. Ղազարյան</b>	Սպանդարյանի ՀՏ պետի տեղակալ
<b>Գ. Սկրտչյան</b>	ՕՀՎ Սպանդարյանի բաժնի պետ
<b>Լ. Բաղայան</b>	Արաբկիր 1 ՀՏ պետի տեղակալ
<b>Ա. Աֆյան</b>	ՕՀՎ Արաբկիրի բաժնի գլխավոր օպեր-լիազոր
<b>Գ. Գևորգյան</b>	Սպանդարյանի 1 ՀՏ պետի տեղակալ

----- հարկային տեսչության կողմից սպասարկվող տարածքում  
 գործող առևտրի իրականացման վայրերի գույքագրման ամփոփ տեղեկանք  
 (----- օրվա դրությամբ)

Հ/Հ	Առևտրի կազմակերպման վայրի կազմակերպչի անվանումը	ՀՎՀՀ	Գործող (զբաղեցրած) վաճառատեղերի ընդհանուր քանակը	Հարկային մարմիններում հաշվառված սուբյեկտների քանակը		Պայմանագիր կնքածների քանակը	ՀԴՄ տեղադրած սուբյեկտների քանակը	Հարկային մարմիններում չհաշվառված սուբյեկտների քանակը
				մինչև 7/10 մ <sup>2</sup>	7/10 մ <sup>2</sup> –ից ավել			

----- ՀՏ պետ՝